Լ Ր Ա Ց Ո Ւ Ց Ի Չ  Օ Ր Ա Կ Ա Ր Գ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նիստ (N 4)**

1 ապրիլի 2011թ. ժամը $15^{00}$

1 «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի թիվ 141 գիշերօթիկ մսուր-մանկապարտեզի կահավորում» ծրագրի մասին:
(Արմինա Դարբինյան)

2 «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունի քաղաքի կենցաղային կոյուղու և Քարդաշի ջրադրյուրի կապտաժների վերակառուցման նախագծում» օժանդակ ծրագրի մասին:
(Արմինա Դարբինյան)

3 «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի Անդրեյ Սախարովի անվան թիվ 8 ավագ դպրոցի դահլիճի կահավորում» օժանդակ ծրագրի մասին:
(Արմինա Դարբինյան)

4 «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Սուրբ Հակոբ եկեղեցու հիմնանորոգում» ծրագրի մասին:
(Հրահատ Ստեփանյան)

**5. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման մասին**
(Ա. Բարխուդարյան)

5.1 Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

5.2 Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

5.3 Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 1):

5.4 Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 2):

5.5 Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 3):

5.6 Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 4):

5.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Մատենադարան» հիմնադրամ):



**6. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին**
(Ա. Բարխուդարյան)

6.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մարտի 11-ի N Մ-123-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սի.Օ.ԷՅ.ԷՖ.» մանուկների բարեգործական հիմնադրամ):

6.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունվարի 27-ի N Մ-029-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Արմենակ և Աննա Ծաղկէոսյանների անվամբ բուժարան» բարեգործական հիմնադրամ):

6.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-771-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին (Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամ):

6.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մարտի 11-ի N Մ-168-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Շեն» բարեգործականհասարակական կազմակերպություն):

6.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-119-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ (N 1):

6.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-119-Ա որոշման մեջ ու կից ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին (Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2011 թվականի N Մ - - Ա
քաղ. Երևան

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԹԻՎ 141 ԳԻՇԵՐՕԹԻԿ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-1/ -11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի -ի N 01/ -11, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի -ի N -11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N ԱԱ/3-4/ -11 ու Երևանի քաղաքապետի 2011 թվականի -ի N -11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 28368300 դրամ ընդհանուր արժողությամբ «Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի թիվ 141 գիշերօթիկ մսուր-մանկապարտեզի կահավորում» ծրագիրը (կցվում է):

3. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2011 թվականի մարտի 21-ին կնքված N ՀՀ-Կ-09/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կահույքի պատրաստում և տեղադրում ՝ 28368300 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

4. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

5. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Երևանի քաղաքապետին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«22» մարտի 2011թ.

«ՀՀ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի
թիվ 141 գիշերօթիկ մսուր- մանկապարտեզի կահավորում»

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ապահովել Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի թիվ 141 գիշերօթիկ մսուր-մանկապարտեզը անհրաժեշտ կահույքով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ, Երևան քաղաք, սոցիալական բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 28.368.300,00 ՀՀ դրամ: |

2

| | | |
|---|---|---|
| 6. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի թիվ 141 գիշերօթիկ մսուր-մանկապարտեզը |
| 7. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2011թ մարտի 21-ից մինչեւ 2011թ. օգոստոսի 21-ը: |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի Հավելված թիվ 1-ի ցանկի համաձայն գույքի պատրաստում, գնում եւ անհատույց հանձնում՝ 28.368.300,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Երևանի քաղաքապետարանի հետ: |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝ Արմինա Դարբինյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

29.03.11 № 3/38-1/3068-11

Ձեր № ________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 23.03.11թ. N 15/15.1/4296-11 գրության՝ կապված <<Հայաստան>> համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող <<Երևան քաղաքի Շենգավիթ վարչական թիվ 141 գիշերօթիկ մսուր-մանկապարտեզի կահավորում>> ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

034/8767-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380389
Էլ. փոստ press@moj.am

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

01/1720-11
25.03.11

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2011թ. մարտի
23-ի 15/15.1/4296-11 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «ՀՀ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի թիվ 141 գիշերօթիկ մսուր-մանկապարտեզի կահավորում» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Հարգանքով՝** **Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

**Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ա. Մարտիրոսյան հեռ.380.227**

035/8336-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

4/1

«25» 03 2011 թ. N ՖԲ/ՎԷՊ-5/2340-11

Ձեր 2011-03-23, 15/15.1/4296-11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևան քաղաքի Շենգավիթի վարչական շրջանի թիվ 141 գիշերօթիկ մսուր-մանկապարտեզի կահավորում» ծրագրի մասին որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

Հարգանքներով՝ Ֆ. Բերիկյան

040/8441-11

Կատարող՝ Միջազգային կապերի բաժին
հեռ.525-893

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 65, ֆաքս. (374 10) 54 31 60 http://www.mss.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

Ց/3-4/1745-11 4/1
28.03.11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 23.03.2011թ. թիվ 15/15.1/4296-11 գրությանը կից ներկայացված «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի թիվ 141 գիշերօթիկ մսուր-մանկապարտեզի կահավորում»ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/8574-11

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
# ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2011 թվականի N Մ - - Ա

քաղ. Երևան

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԿՈՅՈՒՂՈՒ ԵՒ ՔԱՐԴԱՇԻ ՋՐԱՂԲՅՈՒՐԻ ԿԱՊՏԱԺՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ» ՕԺԱՆԴԱԿ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-1/-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի -ի N 01/ -11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N ԱԱ/3-4/ -11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 5600000 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունի քաղաքի կենցաղային կոյուղու և Քարդաշի ջրաղբյուրի կապտաժների վերակառուցման նախագծում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԵրԾՇՊՀ» ՊՈԱԿ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01506385) 2011 թվականի մարտի 18-ին կնքված N ԼՂ-ՆՆ-06/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակում՝ 5100000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՍՏԱՏՎԱԾ է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն

Արա Վարդանյան
«23» մարտի 2011թ.

# «ԼՂՀ Մարտունի քաղաքի կենցաղային կոյուղու և Քարդաշի ջրադբյուրի կապտաժների վերակառուցման նախագծում» ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Վերականգնել ԼՂՀ Մարտունի քաղաքի կենցաղային կոյուղին և Քարդաշի աղբյուրը |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ԼՂՀ Մարտունի քաղաք, ջրամատակարարման բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 5.600.000,00 դրամ: |
| 6. | Բարեգործություն ստացողը | Մարտունի քաղաքի բնակիչները |
| 7. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2011թ մարտի 18-ից մինչեւ 2011թ. սեպտեմբերի 18-ը: |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | ԵՐԵՆՊՀ ՊՈԱԿ-ի կողմից ԼՂՀ Մարտունի քաղաքի կոյուղու և Քարդաշի աղբյուրի կապտաժների նախագծում՝ 5.100.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:<br><br>Նախատեսվում է նաև վերակառուցման նախագծի փորձաքննություն՝ 500.000,00 դրամ մոտավոր արժեքով: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կառավարության հետ |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

30.03.11 № 3/38-1/3135-11

Ձեր № ________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 25.03.11թ. N 15/15.1/4451-11 գրության՝ կապված <<Հայաստան>> համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող <<ԼՂՀ Մարտունի քաղաքի կենցաղային կոյուղու և Քարդաշի ջրադբյուրի կապտաժների վերակառուցման նախագծում>> ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

034/8923-11

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

4/2

0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380389
Էլ. փոստ press@moj.am

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

01/1840-11
30.03.11

Ի կատարումն ՀՀ կառավարության 2011թ. մարտի 25-ի 15/15.1/4451-11 թվակիր հանձնարարականի

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայտնում ենք, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «ԼՂՀ Մարտունի քաղաքի կենցաղային կոյուղու և Քարդաշի ջրաղբյուրի կապտաժների վերակառուցման նախագծում» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝ Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

035/8869-11

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ա. Մարտիրոսյան հեռ.380.227

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

4/2

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

3/3-4/1751-11
28.03.11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 25.03.2011թ. թիվ 15/15.1/4451-11 գրությանը կից ներկայացված «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունի քաղաքի կենցաղային կոյուղու և Քարդաշի ջրաղբյուրի կապտաժների վերակառուցման նախագծում» ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/8587-11

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
# ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2011 թվականի N Մ - - Ա

քաղ. Երևան

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ ՔԱՂԱՔԻ ԱՆԴՐԵՅ ՍԱԽԱՐՈՎԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 8 ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԴԱՀԼԻՃԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ՕԺԱՆԴԱԿ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-1/-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի -ի N 01/ -11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N ԱԱ/3-4/ -11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 27597500 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի Անդրեյ Սախարովի անվան թիվ 8 ավագ դպրոցի դահլիճի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2011 թվականի մարտի 18-ին կնքված N ԼՂ-Կ-02/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կահույքի պատրաստում և տեղադրում ՝ 27597500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«22» մարտի 2011թ.

## «ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի Ա.Սախարովի անվան թիվ 8 ավագ դպրոցի դահլիճի կահավորում »

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ապահովել Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտ քաղաքի Ա.Սախարովի անվան թիվ 8 ավագ դպրոցի դահլիճը անհրաժեշտ կահույքով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Յայաստան» համահայկական հիմնադրամ (ՅՅ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՅՎՅՅ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Լեռնային Ղարաբաղ, կրթության բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 27.597.500,00 դրամ: |

2

| | | |
|---|---|---|
| 6. | Բարեգործություն ստացողը | Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտ քաղաքի Ա.Սախարովի անվան թիվ 8 ավագ դպրոցը |
| 7. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2011թ մարտի 18-ից մինչեւ 2011թ. օգոստոսի 30-ը: |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՅԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից 740 հատ դահլիճի նստարանների պատրաստում, գնում, տեղափոխում եւ անհատույց տեղադրում՝ 27.597.500,00 դրամ առանց ԱԱՅ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Յամագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԼՂՅ կրթության և գիտության նախարարության հետ: |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՅՅ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

Հրյուց 4/3

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

29.03.11 № 3/3.8-1/3065-11

Ձեր №

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 23.03.11թ. N 15/15.1/4334-11 գրության՝ կապված <<Հայաստան>> համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող <<ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի Անդրեյ Սախարովի անվան թիվ 8 ավագ դպրոցի դահլիճի կահավորում>> ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

034/8768-11

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հրյուց 4/3

0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380389
էլ. փոստ press@moj.am

01/1793-11
28.03.11

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Ի կատարումն ՀՀ կառավարության 2011թ. մարտի 23-ի 15/15.1/4334-11 թվակիր հանձնարարականի

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի Ա. Սախարովի անվան թիվ 8 ավագ դպրոցի դահլիճի կահավորում» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Հարգանքով՝** **Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

035/8565-11

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն, Ա. Մարտիրոսյան, հեռ.380.227

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**

**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** 4/3

0015, Երևան, Մ.Խորենացու 3,

Հեռ. 50 20 20, 59 46 05

3/3-4/1747-11
28.03.11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 23.03.2011թ. թիվ 15/15.1/4334-11 գրությանը կից ներկայացված «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի Անդրեյ Սախարովի անվան թիվ 8 ավագ դպրոցի դահլիճի կահավորում» ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/8582-11

---

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**___ մարտի 2011 թվականի N Մ - -Ա**
**քաղ. Երևան**

4/4

**«ԱՌԴԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի -ի N 3/3.8-1/-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի մարտի -ի N -11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի -ի N ԱԱ/3-4/-11 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312) իրականացվող՝ 43.7 մլն դրամ ընդհանուր արժողությամբ «Սուրբ Հակոբ եկեղեցու հիմնանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱՌ-ԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից

2011 թվականի մարտի 11-ին

Գործադիր տնօրեն Ա. Ստեփանյան

ՀԻՄՆԱԴՐԱՄ ФОНД FOUNDATION 00057312

«Սուրբ Հակոբ եկեղեցու հիմնանորոգում»
ծ ր ա գ ի ր

| | |
|---|---|
| 1. Ծրագրի նպատակը | ՀՀ Արագածոտնի մարզի Վարդենիս համայնքի «Սուրբ Հակոբ» եկեղեցու հիմնանորոգում: |
| 2. Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Հարկային արտոնությունների տրամադրում: Բարեգործին խրախուսում: |
| 3. Բարեգործը | Արթուր Ջանիբեկյան, Օքսանի Հակոբյան (ՀՀ, քաղ. Երևան, Գյուլբենկյան 1, բն 23) |
| 4. Ծրագիրը կատարողը | «ԱՌ-ԴԱ» բարեգործական հիմնադրամ (քաղ. Երևան, Պարույր Սևակի փող. 9, ՀՎՀՀ՝ 00057312): |
| 5. Ծրագրի իրականացման վայրը և բնազավառը | ՀՀ Արագածոտնի մարզ, գյուղ Վարդենիս: Բնագավառը՝ հոգևոր (եկեղեցաշինություն): |
| 6. Ծրագրի բյուջեն | 43,7 մլն դրամ: |
| 7. Բարեգործություն ստացողը | Հայ առաքելական եկեղեցի: |
| 8. Ծրագրի իրականացման տևողությունը | 2011 թվականի մայիսի 1-ից մինչև 2012 թվականի մայիսի 1-ը: |
| 9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Պատերի, սյուների խարիխների և հեծանների ամրանավորում և բետոնացում - 10,2 մլն դրամ, զանգակատուն - 5,7 մլն դրամ, տանիք - 15,1 մլն դրամ, հատակ և ներքին հարդարում - 6,0 մլն դրամ, արտաքին հարդարում - 6,7 մլն դրամ: |
| 10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Շինարարական նյութերի ձեռք բերում - 28,0 մլն դրամ, շինարարական աշխատանքներ - 15,7 մլն դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Ծրագրի համար լրացուցիչ կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն, ծրագիրն իրականացվում է հիմնադրամի ընդհանուր կազմակերպչական ծախսերի հաշվին: |
| 12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների հետ | Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն, Հայ առաքելական եկեղեցու Արագածոտնի թեմ: |
| 13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացվող հաշվետվությունների և բարերարի պարբերական այցելությունների միջոցով: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

25.03.2011թ № 3/3.8-1/2952-11

Ձեր № ____________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 22.03.11թ. N 15/15.6/4252-11 գրության՝ կապված <<ԱՌ-ԴԱ>> բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող <<Սուրբ Հակոբ եկեղեցու հիմնանորոգում>> ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ ծրագրի 9-րդ կետում անհրաժեշտ է մանրամասնել կատարվելիք շինարարական աշխատանքները և ձեռքբերվող շինարարական նյութերը:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

034/8436-11
25.03.2011թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

4/4

0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380389
Էլ. փոստ press@moj.am

**Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

№ 01/1718-11
25.03.2011թ.

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2011թ. մարտի 22-ի 15/15.6/4252-11 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Սուրբ Հակոբ եկեղեցու հիմնանորոգում» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Հարգանքով՝** **Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ա. Մարտիրոսյան հեռ.380.227

035/8334-11
25.03.2011թ.

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
## ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
## ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

4/4

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

№ 3/3-4/1740-11
28.03.2011թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 22.03.2011թ. թիվ 15/15.6/4252-11 գրությանը կից ներկայացված «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Սուրբ Հակոբ եկեղեցու հիմնանորոգում» ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/8567-11
28.03.2011թ.

Հավելված 4/4

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Սուրբ Հակոբ եկեղեցու հիմնանորոգում» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն դիտողությունների ու առաջարկությունների վերաբերյալ | |
| ծրագրի 9-րդ կետում անհրաժեշտ է մանրամասնել կատարվելիք շինարարական աշխատանքները և ձեռքբերվող շինարարական նյութերը | Հաշվի է առնվել, ծրագիրը լրամշակվել է: |

Հավելված 4/4

«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ
Հայ օգնության և զարգացման ընկերակցություն
ARMENIAN RELIEF & DEVELOPMENT ASSOCIATION
ARDA Charitable Fund

9 P. Sevak Street, Yerevan, Armenia
Phone: 209-422. Fax: 209-423

Կ-29/03

29 մարտի 2011 թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պրն ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Տեր-Սիմոնյան.

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի 25-ի N 3/3.8-1/2952-11 գրությամբ արված դիտողությունները, Ձեզ եմ ներկայացնում «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Սուրբ Հակոբ եկեղեցու հիմնանորոգում» ծրագրի լրամշակված տարբերակը:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքներով՝ Հրահատ Ստեփանյան
Գործադիր տնօրեն

ԵՄՅ

…ՐՈՒԹՅԱՆ
094/8887
30 03 …

ՆԱԽԱԳԻԾ

Հավելված 4/5.1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

——————— 2011 թվականի N Մ- -Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի 28-ի N 3/3.8-2/3041-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի մարտի 25-ի N 03/07.1/2768-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի 25-ի N 3/3-6/1725-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Բարեգործական որակել «Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամի կողմից հատկացված գումարներով գնված Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի հասցեով Ռուսաստանից ստացված բեռի (ուսումնական, գեոդեզիական սարքեր՝ 2 տեղ, 50 կգ ընդհանուր քաշով, 87054 ռուբլի ընդհանուր արժեքով) ներդրայալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» U/S) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ին նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Հրաւեր 4/Տ.1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

28.03.11թ № 3/38-2/3041-11

Ձեր № ____________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 25.03.2011թ. N15/15.4/4454-11 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ա. Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

N 034/8698-11
28.03.11թ

---

Հրաւեր 4/Տ.1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

**ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА**

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

**DEPUTY MINISTER**

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 58 03 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: miens@edu.am, www.edu.am

N-03/07-1/2768-11 "25.03" 2011

*ՀՀ կառավարության բարեգործական*
*ծրագրերի համակարգման հանձնաժողովի*
*նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին*

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր սույն թվականի մարտի 25-ի № 15/15.4/4454-11 գրության, հայտնում ենք, որ «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության գիտության և նախարարությունը դիտողություններ և առաջարկություններ չունի:

*ՀԱՐԳԱՆՔՈՎ՝* *Մ.ՄԿՐՏՉՅԱՆ*

*Կատ. Ն.Սահակյան*
*հեռ. 524777*

N 031/8496-11
25.03.11թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ.

N 3/3-06/1725-11
25.03.11թ
4/5.1

**ՀՀ կառավարության բարեգործական**
**ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր ս/թ. մարտի 25-ի համար 15/15.4/4454-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ**

կատարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

N 044/8412-11
25.03.11թ

<u>**ՆԱԽԱԳԻԾ**</u>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

4/5.1

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**2011 թվականի N Մ- -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-262-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱԴԱ-ՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-2/ -11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N ԱԱ/3-6/ -11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից «ԿՈՆԵ Էլեվատորս» ընկերությունից ձեռք բերված PW 06/10-19(4/4) ManoSpase Standart վերելակը (3363.44 կգ ընդհանուր քաշով, 23500 եվրո արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմել են 2750 եվրոյին համարժեք դրամ, ՄԾՓ մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ձր. 4/5.2

____ մարտի 2011 թվականի N Մ - -Ա
քաղ. Երևան

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի -ի N 3/3.8-2/-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի -ի N ԱԱ/3-6/-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով Գերմանիայից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի՝ լոգարանի պարագաների (9 տեղ, 1604 կգ ընդհանուր քաշով, 19250 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 395 եվրո կազմել են փոխադրման ծախսերը, ՄԾՓ» Տ/Մ) ներմուծման ծրագիրը, որը նախատեսված է և անհատույց հանձնվելու է «Սուրբ Ներսես Մեծ» հիվանդանոցին:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել դրանց օգտագործման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

ձր. 4/5.2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

1.04.2011թ. № 3/3.8-2/77021-11

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 29.03.2011թ. N15/15.8/4712-11 գրությամբ ներկայացված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

034/8180-11
1.04.2011թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ.

N: 3/3-6/1877-11
30.03.2011թ.

Ա· 4/5.2

**ՀՀ կառավարության բարեգործական**
**ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր ս/թ. մարտի 30-ի համար 15/15.8/4802-11 գրության՝ հայտնում ենք, որ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չունենք:

**Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ**

*կատարող՝ Լ. Հակոբյան*
*միջազգային հարաբերությունների բաժին*
*հեռ. 59 43 49*

044/8342-11
30.03.2011թ.

<u>*ՆԱԽԱԳԻԾ*</u>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**____ մարտի 2011 թվականի N Մ - - Ա**
**քաղ. Երևան**

Ա· 4/5.3

**ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ**
**ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի -ի N 3/3.8-2/-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի -ի N ԱԱ/3-6/-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ավստրիայից, Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ուղարկված բեռի՝ ֆոտո թիթեղի (մեկ տեղ, 790 կգ ընդհանուր քաշով, 9030 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 1050 եվրո կազմել են փոխադրման ծախսերը, ՄՃՓ» Տ/Մ) ներմուծման ծրագիրը, որը նախատեսված է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարանի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել դրանց օգտագործման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

Ա. 4/5.3

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

1.04.2011թ № 3/3.8-2/7702Կ-11

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 29.03.2011թ. N15/15.8/4730-11 գրությամբ ներկայացված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N1) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

034/8177-11
1.04.2011թ

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

Ա. 4/5.3

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ.

N 3/3-6/1825-11
30.03.2011թ

**ՀՀ կառավարության բարեգործական**
**ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր ս/թ. մարտի 29-ի համար 15/15.8/4730-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 1)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

*կատարող՝ Լ. Հակոբյան*
*միջազգային հարաբերությունների բաժին*
*հեռ. 59 43 49*

044/8866-11
30.03.2011թ.

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

մր. 4/5.4

____ մարտի 2011 թվականի N Մ - -Ա
քաղ. Երևան

### ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի -ի N 3/3.8-2/-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի -ի N ԱԱ/3-6/-11 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Ֆրանսիայից, անհատ բարերար՝ Վաչե Մանուկյանի միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ուղարկված բեռի՝ վերելակներ (65 տեղ, 7082 կգ ընդհանուր քաշով, 63100 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 14112.84 եվրո, ՄԾՓ Տ/Մ) ներմուծման ծրագիրը, որը նախատեսված է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մատենադարանի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել դրանց օգտագործման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

մր. 4/5.4

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

1.04.2011թ. № 3/3.8-2/7702Տ-11

Ձեր №

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 29.03.2011թ. N15/15.8/4734-11 գրությամբ ներկայացված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N2) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ա.Ջանջ

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

034/8175-11
1.04.2011թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** ձր․ 4/5․4

N: 3/3-6/1826-11
30.03.2011թ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ.

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր ս/թ. մարտի 29-ի համար 15/15.8/4734-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 2)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ**

*կատարող՝ Լ. Հակոբյան*
*միջազգային հարաբերությունների բաժին*
*հեռ. 59 43 49*

044/8867-11
30.03.2011թ

---

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ** ձր․ 4/5․5

**____ մարտի 2011 թվականի N Մ - - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 3)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի -ի N 3/3.8-2/-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի -ի N ԱԱ/3-6/-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մեծ Բրիտանիայից, Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ուղարկված բեռի՝ մետաղյա սանտեխնիկայի պարագաների (5 տեղ, 1605 կգ ընդհանուր քաշով, 38 011 38 ֆունտ ստեռլինգին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 616 ֆունտ ստեռլինգ, ՄԾՓ Տ/Մ) ներմուծման ծրագիրը, որը նախատեսված է և անհատույց հանձնվելու է «Սուրբ Ներսես Մեծ» հիվանդանոցին:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել դրանց օգտագործման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

Ա.4/5.5

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

1.04.2011թ. № 3/3.8-2/3212-11

Ձեր № ____________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 29.03.2011թ. N15/15.8/4732-11 գրությամբ ներկայացված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հաացեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N3) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

034/8156-11
1.04.2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

Ա.4/5.5

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ.

N: 3/3-6/1832-11
30.02.2011թ.

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր ս/թ. մարտի 29-ի համար 15/15.8/4732-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 3)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

կատարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

044/8872-11
30.02.2011թ.

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**____ մարտի 2011 թվականի N Մ - -Ա** Մ-4/5.6

**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 4)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի -ի N 3/3.8-2/-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի -ի N ԱԱ/3-6/-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Իտալիայից, Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ուղարկված բեռի՝ լամպեր և լուսատուներ (18 տեղ, 1197.3 կգ ընդհանուր քաշով, 71 081 42 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 725 եվրո, ՄԾՓ Տ/Մ) ներմուծման ծրագիրը, որը նախատեսված է և անհատույց հանձնվելու է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մատենադարանին:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել դրանց օգտագործման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

Մ-4/5.6

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

1.04.2011թ № 3/3.8-2/77022-

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 29.03.2011թ. N15/15.8/4733-11 գրությամբ ներկայացված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N4) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

034/8178-11
1.04.2011թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ Մ. 4/5.6

N 3/3-6/1831-11
30.03.2011թ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ.

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր ս/թ. մարտի 29-ի համար 15/15.8/4733-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 4)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

կատարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

044/8871-11
30.03.2011թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

31.03.11 № 3/3.8-2/3147-11

Ձեր № ____________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ի լրումն մեր 29.03.20011թ. 3/3.8-2/3708-11 գրության հայտնում ենք, որ Ձեր 28.03.2011թ. N15/15.1/4539-11 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Մատենադարան» հիմնադրամ) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

034/8886-11

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ.

3/3-6/1744-11
28.03.11

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր ս/թ. մարտի 28-ի համար 15/15.1/4539-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Մատենադարան» հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Կատարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

044/8573-11

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**2011 թվականի N Մ- -Ա**

**քաղ. Երևան**

4/6.1

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N Մ-123-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍԻ. Օ. ԷՅ. ԷՖ.» ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-1/ -11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N ԱԱ/3-4/ -11 գրությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սի. Օ. ԷՅ. ԷՖ.» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մարտի 11-ի «Սի. Օ. ԷՅ. ԷՖ.» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում» ծրագրի մասին» N Մ-123-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կանակա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06901369) 2011 թվականի մարտի 12-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հիմնանորոգման աշխատանքների իրականացում՝ 639997 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

4/6.1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

29.03.11 № 3/3.8-1/3069-11

Ձեր № ____________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 23.03.11թ. N 15/15.1/4359-10 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011թ. մարտի 11-ի N Մ-123-Ա (<<Սի Օ Էյ Էֆ>> մանուկների բարեգործական հիմնադրամ) որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին որոշման նախագծի (<<Կանակա>> ԲԲԸ-ի հետ կնքված գործարք) հետ, հայտնում ենք, որ կա անհամապատասխանություն՝ որոշման նախագծի 1-ին կետում պայմանագրի արժեքը նշված է 63997 ՀՀ դրամ, իսկ պայմանագրում 639997 ԱՄՆ դոլար:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

034/8766-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

Հրատ. 4/6.1

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

3/3-4/1749-11
28.03.11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 23.03.2011թ. թիվ 15/15.1/4359-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մարտի 11-ի NՄ-123-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սի. Օ. Էյ. Էֆ.» մանուկների բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ.

Կից ներկայացված «Կանակա» ԲԲԸ-ի հետ կնքված պայմանագրի 2-րդ կետում պայմանագրի արժեքը նշված է ԱՄՆ դոլարով, իսկ որոշման նախագծում դրամով: Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում եմ ճշտել նշված անհամապատասխանությունը:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/8586-11

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մարտի 11-ի N Մ-123-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սի. Օ. Էյ. Էֆ.» ՄԲՀ)» որոշման նախագծի վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
| --- | --- |
| ՀՀ ֆինանսների նախարարություն – 29.03.11, N 3/3.8-1/3069-11 | |
| 1. Որոշման նախագծի 1-ին կետում պայմանագրի արժեքը նշված է ՀՀ դրամով՝ ԱՄՆ-ի դոլարի փոխարեն | 1. Կատարված է համապատասխան ուղղում |
| ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե – 28.03.11, N 3/3-4/1749-11 | |
| 1. Որոշման նախագծի 1-ին կետում պայմանագրի արժեքը նշված է ՀՀ դրամով՝ ԱՄՆ-ի դոլարի փոխարեն | 1. Կատարված է համապատասխան ուղղում |

Հրատ. 4/6.1

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հրատ. 4/6.2

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
մարտի 2011 թվականի N Մ--Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-029-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Արմենակ և Աննա Թաղէոսյանների անվամբ բուժարան» բարեգործական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի -ի N 3/3.8-1/-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի -ի N ԱԱ/3-4/-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Արմենակ և Աննա Թաղէոսյանների անվամբ բուժարան» բարեգործական հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Ե. Կողբացու 28, 72, ՀՎՀՀ՝ 02592526) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունվարի 27-ի «Արմենակ և Աննա Թաղէոսյանների անվամբ բուժարան» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Կոշ գյուղում պոլիկլինիկայի կառուցում» ծրագրի մասին» N Մ-029-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Դի Էս Սիսթեմս» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01240937) 2011 թվականի մարտի 9-ին կնքված՝ N 2.04 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հրդեհի ազդանշանային և տարհանման ազդարարման համակարգերի ներդրման աշխատանքների իրականացում՝ 2421300 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

18.03.11 № 2/3.8-1/2645-11

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ի պատասխան Ձեր 14.03.11թ. N 15/15.2/3671-11 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010թ. հունվարի 27-ի N Մ-029-Ա (<<Արմենակ և Աննա Թադևոսյանների անվամբ բուժարան>>) որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին որոշման նախագծի (<<Դի Էս Սիսթեմ>> ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագիր) հետ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ

### ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

### ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

15.03.2011թ
ԱԱ/3-4/1448-11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 14.03.2011թ. թիվ 15/15.2/3671-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունվարի 27-ի NՄ-029-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Արմենակ և Աննա Թադևոսյանների անվամբ բուժարան» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
# ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2011 թվականի N Մ - -Ա

քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N Մ-771-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի 1-ի N 3/3.8-1/-11 և Հայաստանի անրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N ԱԱ/3-4/-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մհեր Մկրտչյան 5, ՀՎՀՀ՝ 02704593) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 29-ի «Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի կողմից իրականացվող «Տաթևի վերածնունդ» ծրագրի մասին» N Մ-771-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2011 թվականի փետրվարի 4-ին կնքված՝ N 114662028 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի մարտիի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 4000000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ի-Վի-Քոնսալթինգ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01557607) 2011 թվականի փետրվարի 11-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գյուղական իջևանատների զարգացման ծրագրի հայեցակարգի մշակում՝ 2720000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00040569) 2011 թվականի մարտի 1-ին կնքված՝ N AT-AU-11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տարեկան ֆինանսական հաշվետվությունների և աուդիտի իրականացում՝ 3083333 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Իմիջ ՄԳ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05533192) 2010 թվականի հոկտեմբերի 14-ին կնքված՝ N 107 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գովազդային վահանակների սպասարկման ծառայությունների մատուցում՝ ամսեկան 144000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

25.03.11 № 3/3.8-1/2949-11

Ձեր № ____________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ի պատասխան Ձեր 21.03.11թ. N 15/15.1/4083-11 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010թ. հոկտեմբերի 29-ի N Մ-771-Ա (<<Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամ>>) որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին որոշման նախագծի (<<Արմենտել>> ՓԲԸ-ի, <<ԱԷՔՈՄ>> ՍՊԸ-ի, <<Ի-Վի-Քոնսալթինգ>> ՓԲԸ-ի, <<Գրանթ Թորնթոն>> ՓԲԸ-ի և <<Իմիջ ՄԳ>> ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրեր) հետ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

034/8394-11

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

3/3-4/1742-11
28.03.11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 21.03.2011թ. թիվ 15/15.1/4083-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 29-ի NՄ-771-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին (Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ.

Կից ներկայացված «ԱԷՔՈՄ» ՍՊԸ-ի հետ 22.09.2010թ-ին կնքված N1004/2010 պայմանագրի 2.2 կետի համաձայն պայմանագրի իրականացման ժամկետը ավարտվել է 2011 թվականի փետրվարի 28-ին, ուստի արդեն իսկ կատարված գործարքի գծով հարկային արտոնություններ չեն կարող տրամադրվել: Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ եմ համարում որոշման նախագծից հանել 1-ին կետի 2-րդ ենթակետը:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/8569-11

Հրում
4/6.3

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-771-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե –28.03.11, N ԱԱ/3-4/1742-11 | |
| 1. Որոշման նախագծի 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված պայմանագրի ժամկետը ավարտված է | 1. 2-րդ ենթակետը հանված է որոշման նախագծից |

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
2011 թվականի N Մ - -Ա
քաղ. Երևան

Հրում
4/6.4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N Մ-168-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՇԵՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-1/-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N ԱԱ/3-4/-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ   է.***

1. Սահմանել, որ «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մարտի 11-ի «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Օրգանական բանջարեղենի մշակության փորձացուցադրական ուսումնական կենտրոնի հիմնում» ծրագրի մասին» N Մ-168-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գալոպեր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00069233) 2011 թվականի փետրվարի 17-ին կնքված՝ N 01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տրակտորի ձեռքբերում՝ 7245000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

Հրում

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

3/3-4/1875-11
31.03.11
4/6.4

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 30.03.2011թ. թիվ 15/15.1/4792-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մարտի 11-ի NՄ-168-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («ՇԵՆ» բարեգործական հասարակական կազմակերպություն)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/9026-11

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

4/6.5

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

մարտի 2011 թվականի N Մ -     - Ա
քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-119-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ) (N1)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի 30-ի N 3/3.8-1/3136-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի 31-ի N 3/3-4/1872-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ՀՎՀՀ՝ 02535097) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից 2011-2012 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-119-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ասողիկ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00835755) 2011 թվականի մարտի 21-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է երեխայի իրավունքների պաշտպանության վերաբերյալ ձեռնարկների, կոնվենցիայի և հավաստագրի տպագրումը՝ 506 700 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

4/6.5

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

30.03.11թ. № 3/3.8-1/3136-11

Ձեր № ____________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 28.03.11թ. N 15/15.11/4604-11 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011թ. փետրվարի 18-ի N Մ-119-Ա (<<Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ>>) որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին որոշման նախագծի (<<Ասողիկ>> ՍՊԸ-ի հետ կնքված գործարք) հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

30.03.11թ.

№ 034/8943-11

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

4/6.5

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05


31. 03. 11թ.
№ 3/3-4/1872-11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 28.03.2011թ. թիվ 15/15.11/4604-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի ՆՄ-119-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ)(N1)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

31. 03. 11թ.
№ 044/9023-11

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՆՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

4/6.6

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**մարտի 2011 թվականի N Մ - - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-119-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի 29-ի N 3/3.8-1/3071-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի 28-ի N 3/3-4/1746-11 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի 2011 թվականի մարտի 16-ի և 2011 թվականի մարտի 22-ի գրությունները **ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից 2011-2012 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-119-Ա որոշման մեջ ու կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները ու լրացումները՝

1) որոշման 1-ին կետում «2.009.070 ԱՄՆ-ի դոլարին» բառերը փոխարինել «2 055 070 ԱՄՆ-ի դոլարին» բառերով.

2) ծրագրի 6-րդ կետում «2,009,070 ԱՄՆ դոլար» և «237,070 ԱՄՆ դոլար (119,204 ԱՄՆ դոլար 2011 թ. և 117,866 ԱՄՆ դոլար 2012 թ.)» բառերը համապատասխանաբար փոխարինել «2 055 070 ԱՄՆ դոլար» և «283 070 ԱՄՆ դոլար (142 204 ԱՄՆ դոլար 2011 թ. և 140 866 ԱՄՆ դոլար 2012 թ.)» բառերով.

3) ծրագրի 10-րդ կետում «հեռահաղորդակցման կապի ծառայությունների վարձավճարներից ԱԱՀ-ից ազատում,» բառերից հետո ավելացնել «տարեկան ֆինանսական աուդիտի իրականացման վճարի ԱԱՀ-ից ազատում (աուդիտի դիմաց տարեկան վճարը կազմում է 23 000 ԱՄՆ դոլար)» բառերը և «14,000 ԱՄՆ դոլար» բառերը փոխարինել «60 000 ԱՄՆ դոլար» բառերով.

4) ծրագրի 11-րդ կետում «2010-11 թթ. ԲՀԻՕՀՀՄ-ի հաշվետվության տպագրում 4,000 ԱՄՆ դոլար,» բառերից հետո ավելացնել «տարեկան ֆինանսական աուդիտի իրականացում 23 000 ԱՄՆ դոլար» բառերը և «կազմում են 237,070 ԱՄՆ դոլար (119,204 ԱՄՆ դոլար 2011 թ. և 117,866 ԱՄՆ դոլար 2012 թ.), որը կազմում է ԲՀԻՕՀՀՄ-ի 2011-12 թթ. ընդհանուր ծրագրային ծախսերի մոտ 11,8%:» բառերը փոխարինել «կազմում են 283 070

ԱՄՆ դոլար (142 204 ԱՄՆ դոլար 2011 թ. և 140 866 ԱՄՆ դոլար 2012 թ.), որը կազմում է ԲՀԻՕՀՀՄ-ի 2011-12 թթ. ընդհանուր ծրագրային ծախսերի մոտ 13,8%:» բառերով:

2. Սահմանել, որ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ՀՎՀՀ՝ 02535097) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02529689) 2011 թվականի մարտի 10-ին կնքված՝ N A/006/2011 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի տարեկան ֆինանսական աուդիտի իրականացում՝ 8 454 800 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Դրույ 4/6.6


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26


Դրույ 4/6.6

29.03.11թ. № 3/3.8-1/3071-11

Ձեր № ____________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 23.03.11թ. N 15/15.11/4302-11 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011թ. փետրվարի 18-ի N Մ-119-Ա (<<Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ>>) որոշման մեջ փոփոխություն կատարելու և հարակից գործարքի մասին որոշման նախագծի (<<Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա>> ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագիր) հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

29.03.11թ.
№ 034/8761-11

Կրթ. 4/6.6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

28.03.11թ.
№ 3/3-4/1746-11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 23.03.2011թ. թիվ 15/15.11/4302-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի ՆՄ-119-Ա որոշման մեջ ու կից ծրագրում փոփոխություններ ու լրացումներ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին (Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

28.03.11թ.
№ 044/8581-11

---

Կրթ. 4/6.6

Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան
Թումանյան փողոց 2-րդ փակ. տուն 7/1, Երևան, 375002 Հայաստան • Հեռ/Ֆաքս (374-10) 533862, 536758
• E-mail: info@osi.am • www.osi.am •

Գործադիր տնօրեն
*Լարիսա Մինասյան*

Տնօրենների խորհուրդ

Հրայր Թովմասյան
*Գործող նախագահ*

Ավետիք Իշխանյան
Դավիթ Խաչատուրյան
Լանա Կարլովա
Յուրի Սարգսյան
Արմեն Փիրուզյան

22 մարտի, 2011թ.

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ
պ-ն Ս.Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ի լրումն ԲՀԻ ՕՀ հայկական մասնաճյուղի կողմից ս.թ. մարտ 16-ին Ձեզ ուղղված նամակի, ներկայացնում ենք ԲՀԻ ՕՀ հայկական մասնաճյուղի 2011-2012 թթ. բարեգործական որակված (թիվ Մ-119-Ա որոշում) ծրագրում առաջարկվող փոփոխությունները:

- ծրագրի 6-րդ կետը խմբագրել հետևյալ կերպ՝ յուրաքանչյուր տարվա համար ավելացնելով 23 000 ԱՄՆ դոլար.
«ԲՀԻ ՕՀՀՄ-ի 2011-2012թթ. ծրագրի ընդհանուր գումարը կազմում է 2 055 070 ԱՄՆ դոլար» և «Կազմակերպչական ծախսեր 283 070 ԱՄՆ դոլար (142 204 ԱՄՆ դոլար 2011թ. և 140 866 ԱՄՆ դոլար 2012թ.)»

- ծրագրի 10-րդ կետում ձեռքբերվող ապրանքների և ծառայությունների ցանկին ավելացնել «տարեկան ֆինանսական աուդիտի իրականացման վճարի ԱԱՀ-ից ազատում» բառերը և ընդհանուր գումարը փոփոխել հետևյալ կերպ.
«Ընդհանուր արժեքը երկու տարվա համար կազմում է 60 000 ԱՄՆ դոլար» :

- ծրագրի 11-րդ կետում կատարել հետևյալ լրացումը.
«տարեկան ֆինանսական աուդիտի իրականացում 23 000 ԱՄՆ դոլար»
և փոփոխել գումարները հետևյալ կերպ.
«ԲՀԻՕՀՀՄ-ի կողմից իրականացվող բոլոր ծրագրերի ընդհանուր կազմակերպչական ծախսերը կազմում են 283 070 ԱՄՆ դոլար (142 204 ԱՄՆ դոլար 2011թ. և 140 866 ԱՄՆ դոլար 2012թ.), որը կազմում է ընդհանուր ծրագրային ծախսերի մոտ 13,8 %:»

Առաջարկվող փոփոխությունները պայմանավորված են նրանով, որ 2011 թվականին ԲՀԻՕՀՀՄ-ի աուդիտի անցկացման պայմանագրային հիմքը փոփոխվել է: Սկսած 2000 թվականից [illegible] ծառայության

ՀՀ ...ԱՐՈՒԹՅԱՆ
...ԱՊԱՄ
...ՆԴ-Ը ԲԱԺԻՆ
Մուտք 034/7980
«22» 03 2011թ.

ծախսերը կատարվել են ԲՀԻ Բուդապեշտի գլխամասային ցանցային գրասենյակի կողմից, ուստի ԲՀԻՕՀՀՄ-ի համար ԱԱՀ-ի մասով պարտավորություններ չեն առաջացել: Սակայն, ս.թ. մարտին՝ օրենսդրական դաշտի փոփոխությամբ պայմանավորված, ԲՀԻ գլխամասային ցանցային գրասենյակի կողմից որոշում է կայացվել, որ 2010թ. ֆինանսական աուդիտի վճարումը Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա ՓԲԸ-ին կատարվի ԲՀԻՕՀՀՄ-ի կողմից (պայմանագիրը ներկայացվել է նախորդ նամակին կից): Ծառայության վճարի չափը կազմում է 23 000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, որը լրացուցիչ կհատկացվի ԲՀԻ ՕՀ ՀՄ-ին:

Նույն մոտեցումը կկիրառվի նաև հաջորդ տարվա ֆինանսական աուդիտի անցկացման ու վճարման նկատմամբ:

Կանխավ շնորհակալ ենք համագործակցության համար:

Հարգանքներով՝

Լարիսա Մինասյան
Գործադիր տնօրեն

Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան
Թումանյան փողոց 2-րդ փակ. տուն 7/1, Երևան, 375002 Հայաստան • Հեռ/Ֆաքս (374-10) 533862, 536758
• E-mail: info@osi.am • www.osi.am •

Գործադիր տնօրեն
*Լարիսա Մինասյան*

Տնօրենների խորհուրդ

Հրայր Ղուկասյան
*Գործող նախագահ*

Ավետիք Իշխանյան
Դավիթ Խաչատուրյան
Լանա Կարլովա
Յուրի Սարգսյան
Արմեն Փիրուզյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերը
Համակարգող հանձնաժողովի նախագահ՝
պ-ն. Տեր-Սիմոնյանին

Դրույք
4/6.6

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

«Բաց հասարակության ինստիտուտ» (ԲՀԻ) օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի 2011-2012 թվականներին իրականացվող ծրագրի շրջանակներում ԲՀԻ օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի և «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ի միջև կնքվել է պայմանագիր ԲՀԻ օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի 2010 թվականի ֆինանսական հաշվետվությունների և Բաց հասարակության հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվական փաթեթի աուդիտի իրականացման վերաբերյալ: Պայմանագրի գումարը կազմում է 8 454 800 ՀՀ դրամ առանց ԱԱՀ: Պայմանագիրը կնքվել է 2011 թ. մարտի 10-ին:

Համաձայն «ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի թիվ Մ-119-Ա» որոշման՝ խնդրում ենք Ձեզ ազատել նշված գործարքը Ավելացված Արժեքի Հարկի վճարումից:

Կից ներկայացվում է պայմանագրի պատճենը:

Հարգանքներով՝

Լարիսա Մինասյան
ԲՀԻ օժանդակության հիմնադրամի
Հայկական մասնաճյուղի գործադիր տնօրեն

16. 03. 2011թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
094/7245
16 03 2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 փետրվարի 2011 թվականի N Մ-119-Ա
քաղ. Երևան

## ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ (ԲՀԻՕՀՀՄ) ԿՈՂՄԻՑ 2011-2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի փետրվարի 15-ի N 3/3.8-1/1270-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի փետրվարի 8-ի N 01/14-3.2-64/607-11, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2011 թվականի փետրվարի 9-ի N 07/07.1/650-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի փետրվարի 8–ի N ՀՔ/22/693-11, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի փետրվարի 4-ի N ՖԲ/ՄարտՄԽ-2/647-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի փետրվարի 9-ի N 03/07.2/949-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի փետրվարի 8-ի N ԱԱ/3-4/593-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից 2011-2012 թթ. Իրականացվող՝ 2.009.070 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ ծրագիրը (կցվում է):

2. Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների վերաբերյալ, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկություններ:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի
գործադիր տնօրեն Լարիսա Մինասյանի կողմից

«23 փետրվարի» 2011թ.

Բաց Հասարակության Ինստիտուտի Օժանդակության Հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից 2011-12թթ. իրականացվող

# ԾՐԱԳԻՐ

**1. Ծրագրի նպատակը**

Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) ծրագրի առաքելությունն է նպաստել Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների կայացմանն ու ուժեղացմանը, խրախուսել հանդուրժողականության տարածմանը՝ քաղաքացիական հասարակության զարգացման միջոցով, տարածել բաց հասարակության արժեքները և աջակցել արդյունավետ կառավարմանը նպաստող քաղաքականության մշակմանն ու կիրառմանը հանրային կյանքի տարբեր ոլորտներում:

*ԲՀԻՕՀՀՄ-ն ունի հետևյալ ուղղությունները.* 1. Քաղաքացիական հասարակություն, 2. Հանրային առողջապահություն, 3. Տեղեկատվություն, 4. Բարձրագույն կրթություն, 5. Միջնակարգ կրթություն, 6. Իրավունք և քրեական արդարադատություն:

ԲՀԻՕՀՀՄ-ի նպատակներն հետևյալներն են ըստ ուղղությունների.

Քաղաքացիական հասարակություն
- օժանդակել Հայաստանի քաղաքացիական հասարակության ինստիտուտների կայացմանը, ուժեղացնել հասարակական կազմակերպությունների կարողությունները՝ արդյունքում ունենալով համախմբվածություն անապահով և խոցելի խավերի իրավունքների և շահերի պաշտպանության արդյունավետ մեխանիզմներ: Նպաստել Հայաստանի հասարակական կյանքի տարբեր ոլորտներում ի հայտ եկած խնդիրների շուրջ քաղաքականությունների մշակմանն ու դրանց շուրջ քննարկումների անցկացմանն՝ պետական, հասարակական, միջազգային կառույցների մասնակցությամբ: Նպաստել մարզային բնակչության ակտիվությանը իր համայնքի կառավարման գործընթացներում:

Հանրային առողջապահություն
- օժանդակել Հայաստանում պալիատիվ (ցավամոքիչ) բժշկության քաղաքականության մշակմանն ու ներդրմանը՝ ապահովելով համապատասխան մասնագիտական պատրաստվածություն: Նպաստել խոցելի խավերի առողջապահական իրավունքների պաշտպանությանը: Ստեղծել համապատասխան կրթական և մասնագիտական միջավայր՝ հանրային առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության խնդիրները զուգահեռ քննարկելու համար:

Տեղեկատվություն
- սատարել առաջադեմ և բարենպաստ կրթական միջավայրի հաստատմանը, որը իրականացվում է նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմամբ և տարածմամբ կրթության, գիտության, գրադարանային բնագավառներում: Աջակցել տեղեկատվական տեխնոլոգիաների առավել մատչելի լինելուն հասարակական կառույցների համար՝ ստեղծելով հայալեզու ծրագրային միջավայրեր ու ինտերնետային ռեսուրսներ:

Բարձրագույն կրթություն
- աջակցել հայաստանյան բուհական համակարգի համապատասխանելիությանն եվրոպական չափանիշներին՝ օժանդակելով Բոլոնիայի շրջանակներում առավել արդյունավետ բարեփոխումների իրականացմանը: Նպաստել բուհական կրթության որակի մրցունակության ապահովմանը՝ միջազգային չափանիշներին համապատասխան:

Միջնակարգ կրթություն
- նպաստել միջնակարգ կրթության բնագավառում տեղի ունեցող բարեփոխումներին, դրանք դարձնելով առավել դյուրին և արդյունավետ՝ առարկայական չափորոշիչների և համապատասխան ուսումնական ծրագրերի և նյութերի մշակման միջոցով, ինչպես նաև բարձրացնել որակյալ կրթության մատչելիությունը հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար՝ ստեղծելով անհրաժեշտ պայմաններ նրանց ուսուցումը ապահովելու համար:

Իրավունք և քրեական արդարադատություն
- օժանդակել Հայաստանի կողմից արդարադատության ոլորտում ստանձնած բարեփոխումների իրականացմանը և դրանց մասին տեղեկատվությունը դարձնել մատչելի լայն հասարակության համար: աջակցել փակ և կիսափակ հաստատություններում պայմանների բարելավմանը և դրանք միջազգային չափանիշներին համապատասխանեցնելուն; նպաստել արդարադատության մատչելիության բարձրացմանն՝ աջակցելով փաստաբանական գործունեության առավել որակյալ դառնալուն:

**2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը**

Ակնկալվում է հարկային արտոնությունների ստացում ապրանքների, սարքավորումների ներմուծման և ձեռքբերման դեպքում մաքսային վճարներից և ԱԱՀ-ից ազատում, հեռահաղորդակցման կապի ծառայությունների վարձավճարների ԱԱՀ-ից ազատում, տպագրական ծախսերի ԱԱՀ-ից ազատում, կոնֆերանսների, սեմինարների կազմակերպման հետ կապված տարածքի վարձակալության և այլ ծառայությունների ԱԱՀ-ից ազատում:

| | |
|---|---|
| 3. | Բարեգործը<br>Ֆինանսավորումը կատարվում է Ցյուրիխի (Շվեյցարիա) Բաց հասարակության ինստիտուտի հիմնադրամի, ինչպես նաև ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, Նիդերլանդների կառավարությունների կողմից՝ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղին տրամադրած միջոցներով: |
| 4. | Ծրագիրը կատարողը<br>Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ<br>Գործող հասցե՝ Թումանյան փողոց, 2-րդ փակուղի, տ. 7/1, Երևան 0002, հեռ. 533862, 536758<br>Իրավաբանական հասցե՝ Արամի 44<br>ՀՎՀՀ՝ 02535097 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը<br>Ծրագիրն իր բոլոր ուղղություններով իրագործվում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում՝ ներառյալ Երևանն ու հեռավոր մարզերը: |
| 6. | Ծրագրի բյուջեն<br>ԲՀԻՕՀՀՄ-ի 2011 – 12թթ. ընդհանուր ծրագրի գումարը կազմում է 2,009,070 ԱՄՆ դոլար, որից ըստ ուղղությունների.<br>1. Քաղաքացիական հասարակություն — 600,000 ԱՄՆ դոլար (300,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 300,000 ԱՄՆ դոլար 2012թ.)<br>2. Հանրային առողջապահություն — 250,000 ԱՄՆ դոլար (125,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 125,000 ԱՄՆ դոլար 2012թ.)<br>3. Տեղեկատվություն — 255,000 ԱՄՆ դոլար (130,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 125,000 ԱՄՆ դոլար 2012թ.)<br>4. Բարձրագույն կրթություն — 200,000 ԱՄՆ դոլար (100,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 100,000 ԱՄՆ դոլար 2012թ.)<br>5. Իրավաբանական և քրեական արդարադատություն — 260,000 ԱՄՆ դոլար (130,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 130,000 ԱՄՆ դոլար 2012թ.)<br>6. Միջնակարգ կրթություն — 207,000 ԱՄՆ դոլար (106,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 101,000 ԱՄՆ դոլար 2012թ.)<br>7. Կազմակերպչական ծախսեր — 237,070 ԱՄՆ դոլար (119,204 ԱՄՆ դոլար 2011թ. և 117,866 ԱՄՆ դոլար 2012թ.)<br>Ֆինանսավորումը կատարվում է Ցյուրիխի (Շվեյցարիա) Բաց հասարակության ինստիտուտի հիմնադրամի կողմից՝ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղին տրամադրած միջոցներով՝ ծրագրի իրականացման ընթացքում (եռամսյակային կտրվածքով՝ միջինը 251,134 ԱՄՆ դոլար): |
| 7. | Բարեգործություն ստացողը<br><br>«Քաղաքացիական հասարակություն» ուղղության շրջանակներում 2011թ. փետրվարի 1-ի դրությամբ արդեն հայտնի դրամաշնորհ ստացողները հետևյալ կազմակերպություններն են. |
| | «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա» հասարակական կազմակերպություն<br>Գտնվելու վայրը՝ Սարյան 22, ք. Երևան 0002<br>ՀՎՀՀ՝ 01512224<br>«Պետական կարիքների գոհերն ի պաշտպանություն ժողովրդավարության» հասարակական կազմակերպություն<br>Գտնվելու վայրը՝ Մ. Խորենացի 27, բն. 46, ք. Երևան 0010<br>ՀՎՀՀ՝ 01239001<br>«Ընդդեմ իրավական կամայականության» հասարակական կազմակերպություն<br>Գտնվելու վայրը՝ Արշակունյաց 6, ք. Երևան 0023<br>ՀՎՀՀ՝ 01505856<br>«Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե» հասարակական կազմակերպություն<br>Գտնվելու վայրը՝ Մաշտոցի 13, սենյակ 7 ք. Երևան 0002<br>ՀՎՀՀ՝ 02565939<br>«Ունիսոն» հասարակական կազմակերպություն<br>Գտնվելու վայրը՝ Դեմիրճյան 36, ք. Երևան 0002<br>ՀՎՀՀ՝ 00072812<br>«Համագործակցություն հանուն ժողովրդավարության» հասարակական կազմակերպություն<br>Գտնվելու վայրը՝ Ա. Խաչատրյան 23, բն. 70, ք. Երևան<br>ՀՎՀՀ՝ 00826651<br>«Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպություն<br>Գտնվելու վայրը՝ Սարմեն 1, ք. Երևան 0009<br>ՀՎՀՀ՝ 02513655<br>«Կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն» հասարակական կազմակերպություն<br>Գտնվելու վայրը՝ Սպենդիարյան 3, բն. 14, ք. Երևան 0001<br>ՀՎՀՀ՝ 01516209<br>«Սոցիալական աշխատանքի և սոցիոլոգիական հետազոտությունների «Վստահություն» կենտրոն» հասարակական կազմակերպություն<br>Գտնվելու վայրը՝ Թումանյան 23, սենյակ 40-41, ք. Երևան 0002<br>ՀՎՀՀ՝ 02534885<br>«Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպությունը<br>Գտնվելու վայրը՝ Զառուբյան փող., տ. 34, ք. Երևան<br>ՀՎՀՀ՝ 02576934<br><br>Այս կազմակերպությունների ընտրությունը կատարվել է մրցույթների արդյունքում, իրենց կողմից ներկայացված ծրագրերի հիման վրա, որոնք հաստատվել են ԲՀԻՕՀՀՄ-ի Տնօրենների խորհրդի կողմից:<br>2011-12թթ. ընթացքում իրականացվող ծրագրի ստացողներ են հանդիսանալու նաև մարդու իրավունքների և խոցելի |

խավերի շահերի պաշտպանության խնդիրներով զբաղվող այլ հասարակական կազմակերպություններ, ինչպես նաև ԲՈՒՀեր և դպրոցներ: Նրանց ընտրությունը կկատարվի հայտարարված բաց մրցույթների արդյունքում ներկայացրած հայտերի հիման վրա:

Մրցույթների չափանիշները միանման են ԲՀԻՕՀՀԱ-ի բոլոր ուղղությունների համար և ներկայացված են ստորև:

«Հանրային առողջապահություն» ուղղություն իր մեջ ունի մի քանի ենթաուղղություններ: Ստորև ներկայացվում են դրամաշնորհի ստացողներն ըստ ենթաուղղությունների.

ա) «Իրավունք և առողջապահություն» ծրագրի ուղղության դրամաշնորհի ստացողներից է
«Հակաթմրամոլային քաղաքացիական դաշինք» հասարակական կազմակերպությունը
Գտնվելու վայրը՝ Գայի պողոտա, շ. 1, բն. 38, ք. Երևան 0040
ՀՎՀՀ՝ 00852968
Ծրագրի շրջանակներում դրամաշնորհի ստացողներ են հանդիսանում ԲՈՒՀերը, մարդու իրավունքների և խոցելի խավերի շահերի պաշտպանության և առողջապահական խնդիրներով զբաղվող, ինչպես նաև առողջապահական բնագավառում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունները: Նրանց ընտրությունը կկատարվի հայտարարված մրցույթների արդյունքում:
բ) «Անոքիչ (Պալիատիվ) խնամք» ծրագիր
Ծրագրի շրջանակներում նախատեսվում է աջակցություն պալիատիվ բժշկության ոլորտի քաղաքականության մշակմանն ու իրականացմանը, համապատասխան մասնագետների պատրաստմանը՝ հատուկ ուսումնական կենտրոնի ստեղծման միջոցով, ինչպես նաև այդ ոլորտի խնդիրների շուրջ պարբերական քննարկումների կազմակերպմանը: Ծրագիրն իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարության հետ սերտ համագործակցությամբ:
Այս աշխատանքները կիրականացվեն «Հակացավային և պալիատիվ օգնության ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից, որի ընտրությունը կատարվել է կազմակերպության կողմից ներկայացրած ծրագրի հիման վրա և հաստատվել է տեղական Տնօրենների և Հանրային առողջապահություն ցանցային ծրագրի խորհուրդների կողմից: Ծրագիրը կիրականացվի նաև ինչպես ուղղակիորեն Հիմնադրամի, այնպես էլ պալիատիվ բժշկության բնագավառում գործունեություն իրականացնող պետական, հասարակական կազմակերպությունների և համապատասխան փորձագետների կողմից:
«Հակացավային և պալիատիվ օգնության ասոցիացիա» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Մ. Խորենացի 27, բն. 85, ք. Երևան 0010
ՀՎՀՀ՝ 02571251
գ) «Հոգեկան առողջություն» ծրագիր
Ծրագրի շրջանակներում նախատեսվում է աջակցություն Հայաստանի Հանրապետության հոգեկան առողջության ոլորտի քաղաքականության մշակմանը և դրա շուրջ շահագրգիռ կողմերի միջև քննարկումների կազմակերպմանը, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, համապատասխան մասնագետների պատրաստմանը: Ծրագիրն իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարության հետ խորհրդակցությունների և համագործակցության տարբերակով:
Այս աշխատանքները կիրականացվեն տեղական և միջազգային համապատասխան փորձագետների ընդգրկմամբ և կհամակարգվեն Հիմնադրամի կողմից:
դ) «Երեխաների իրավունքների պաշտպանության և վերահսկման» ծրագիր
Ծրագրի շրջանակներում նախատեսվում է մշակել երեխաների իրավունքների պաշտպանության և վերահսկման առավել արդյունավետ մեխանիզմներ և նպաստել դրանց ներդրմանն ու կիրառմանը Հայաստանի ողջ տարածքում: Ծրագիրը իրականացվելու է «Սեյվ դը չիլդրեն Ֆեդերեյշըն, ինկ.» հայաստանյան գրասենյակի կողմից, որի ընտրությունը կատարվել է կազմակերպության կողմից ներկայացրած ծրագրի հիման վրա և հաստատվել է տեղական Տնօրենների և Հանրային առողջապահություն ցանցային ծրագրի խորհուրդների կողմից: Ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական հանձնաժողովի կողմից:
«Սեյվ դը չիլդրեն Ֆեդերեյշըն, ինկ.» հայաստանյան գրասենյակ
Գտնվելու վայրը՝ Ազաթանգեղոսի 2ա, ք. Երևան 0023
ՀՎՀՀ՝ 01519077

«Տեղեկատվություն» ուղղության դրամաշնորհի ստացողներն են՝
«Հայաստանի գիտահետազոտական և կրթական կոմպյուտերային ցանցերի ասոցիացիա» հիմնադրամ (ԱՐԵՆԱ)
Գտնվելու վայրը՝ Պ. Սևակի 1, ք. Երևան
ՀՎՀՀ՝ 00848085
Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ
Գտնվելու վայրը՝ Հ. Հակոբյան 3, ք. Երևան 0033
ՀՎՀՀ՝00001672

Այս կազմակերպությունների ընտրությունը կատարվել է ներկայացված ծրագրերի հիման վրա և հաստատվել է տեղական տնօրենների խորհրդի կողմից:
Ծրագրի ստացողներ են հանդիսանում նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպություններ, կենտրոնական և մարզային գրադարաններ, դպրոցներ, ԲՈՒՀեր: Նրանց ընտրությունը կկատարվի հայտարարված բաց մրցույթների արդյունքում:

«Միջնակարգ և բարձրագույն կրթություն» ուղղության շրջանակներում դրամաշնորհի ստացողներն են՝
Երևանի խուլքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների թիվ 8 հատուկ դպրոց
Գտնվելու վայրը՝ Հ. Ներսիսյան 3, ք. Երևան
ՀՎՀՀ՝ 00008415
Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր
Գտնվելու վայրը՝ Նորքի այգիներ 193, ք. Երևան
ՀՎՀՀ՝ 01504672

Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն
Գտնվելու վայրը՝ Քաջազնունի 12, ք. Երևան
ՀՎՀՀ՝ 01518806
Գյումրու թիվ 1 կրթահամալիր
Գտնվելու վայրը՝ Աճեմյան 40, ք. Գյումրի, Շիրակի մարզ
ՀՎՀՀ՝ 05511191
Մեծամորի թիվ 1 միջնակարգ դպրոց
Գտնվելու վայրը՝ ք. Մեծամոր, Արմավիրի մարզ
ՀՎՀՀ՝ 04407966
Երևանի Ս. Կապուտիկյանի անվան թիվ 145 միջնակարգ դպրոց
Գտնվելու վայրը՝ Հովսեփ Էմինի 8, ք. Երևան 0033
ՀՎՀՀ՝ 00031422
Սուրենավանի միջնակարգ դպրոց
Գտնվելու վայրը՝ Դպրոցականների 1, գ. Սուրենավան, Արարատի մարզ
ՀՎՀՀ՝ 06910137
Հրազդանի Խաչատուր Աբովյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոց
Գտնվելու վայրը՝ Սպանդարյանի 10, ք. Հրազդան, Կոտայքի մարզ
ՀՎՀՀ՝ 03006228
Երևանի թիվ 198 միջնակարգ դպրոց
Գտնվելու վայրը՝ Նոր Նորքի 9-րդ զանգված, շ. 13/1, ք. Երևան
ՀՎՀՀ՝ 00805688
«Կրթություն առանց սահմանների» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Տիգրան Մեծ նրբ., շ. 31, ք. Երևան
ՀՎՀՀ՝ 00438507
Երևանի պետական համալսարան – կրթության քաղաքականություն և կրթության որակ ուղղություններում
Գտնվելու վայրը՝ Ալեք Մանուկյան 1, ք. Երևան 0025
ՀՎՀՀ՝ 01506928
Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան
Գտնվելու վայրը՝ Տերյան 105, ք. Երևան 0009
ՀՎՀՀ՝ 01504054
Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ
Գտնվելու վայրը՝ Տիգրան Մեծ 36, ք. Վանաձոր 377200, Լոռու մարզ
ՀՎՀՀ՝ 06902542

Այս կազմակերպությունների ընտրությունը կատարվել է Հիմնադրամի կողմից հայտարարված մրցույթի շրջանակներում ներկայացված ծրագրերի հիման վրա և հաստատվել է տեղական Տնօրենների խորհրդի և Կրթության աջակցման ցանցային ծրագրի Խորհրդի կողմից:
Ծրագրի ստացողներ են հանդիսանում նաև ՀՀ միջնակարգ դպրոցները, ԲՈՒՀերը, այդ բնագավառում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունները: Նրանց ընտրությունը կկատարվի հայտարարված մրցույթների արդյունքում:

«Իրավունք և քրեական արդարադատություն» ուղղության շրջանակներում դրամաշնորհ ստացողներն են՝
«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը ՀՀ Արդարադատության նախարարության Հասարակական դիտորդների խմբի կողմից ներկայացված ծրագրի իրականացումը ապահովելու համար:
Գտնվելու վայրը՝ Տիգրան Մեծ 59, ք. Վանաձոր, Լոռու մարզ
ՀՎՀՀ՝ 06926024
«Մանդատ» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Թումանյան 24, բն. 33ա, ք. Երևան 0002
ՀՎՀՀ՝ 02709141
«Մարդու իրավունքների պաշտպանության երևանյան կենտրոն» հասարակական կազմակերպությունը՝ ՀՀ Ոստիկանության համակարգի Հասարակական դիտորդների խմբի կողմից ներկայացված ծրագրի իրականացումը ապահովելու համար:
Գտնվելու վայրը՝ Վարդաշեն 5-րդ փող. նրբ. 37 տուն, ք. Երևան
ՀՎՀՀ՝ 00437374
«Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպությունը՝ ՀՀ Կրթության նախարարության Հասարակական դիտորդների խմբի կողմից ներկայացված ծրագրի իրականացումը ապահովելու համար:
Գտնվելու վայրը՝ Տիգրան Մեծի 51, ք. Երևան
ՀՎՀՀ՝ 02507911

Այս կազմակերպությունների ընտրությունը կատարվել է կազմակերպությունների կողմից ներկայացրած ծրագրերի հիման վրա և հաստատվել է տեղական Տնօրենների և Մարդու իրավունքների և դրամաշնորհների ղեկավարման ծրագրի, նստավայրը Բուդապեշտ, խորհրդի կողմից:
Ծրագրի շրջանակում դրամաշնորհ ստացողներն են հանդիսանում նաև իրավունքի խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպություններ, անհատներ, որոնց ընտրությունը կկատարվի հայտարարված բաց մրցույթների և իրենց կողմից ներկայացված հայտերի գնահատման հիման վրա:

2011-12թթ. ԲՀԻՕՀՀՄ-ի դրամաշնորհ ստացող կազմակերպությունների ընտրությունը կկատարվի հայտարարված բաց մրցույթների արդյունքում, հետևյալ հիմնական չափանիշներով՝

ա) ծրագրի համապատասխանելիությունը Հիմնադրամի կամ հայտարարած մրցույթի պահանջներին ու նպատակներին,

| | |
|---|---|
| | բ) ծրագրի արդիականությունն ու իրատեսական լինելը,<br>գ) ներկայացված ծրագրի նպատակների, խնդիրների և դրանց իրականացման մեխանիզմների համապատասխանելիությունը և արդյունավետությունը,<br>դ) պահանջվող միջոցների համապատասխանությունը ներկայացված նպատակներին,<br>ե) ծրագիրը ներկայացրած կազմակերպության և ընդգրկված աշխատակազմի պատրաստվածությունը,<br>զ) ծրագիրը իրականացնելու ժամանակ համագործակցության առկայությունը այլ կազմակերպությունների հետ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը<br>ԲՅԻՕՅՅՄ-ի ծրագիրը կիրականացվի 2 տարվա ժամկետում՝ 2011 թվականի հունվարի 1-ից մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը<br><br>2011-12թ. «Քաղաքացիական հասարակություն» ուղղությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագիրը նախատեսում է աջակցել հետևյալ նախաձեռնությանը.<br>ա) 2011թ. մայիս և 2012թ. հունիս ամիսներին հայտարարվելու է մրցույթ՝ ուղղված Երևանում և մարզերում մարդու իրավունքների ոլորտում գործող երիտասարդ ՀԿ-ներին: Մրցույթի նպատակն է հետապնդել օժանդակելու հասարակական կազմակերպություններին՝ հզորացնելով և զարգացնելով իրենց իրավապաշտպան կարողությունները մարդու իրավունքների և խոցելի խմբերի շահերի պաշտպանության (advocacy) ոլորտում: Երկու տարվա ընթացքում դրամաշնորհի կարժանանան մինչև 20 կազմակերպություն, իսկ մրցույթի բյուջեն կկազմի 200,000 ԱՄՆ դոլար (100,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 100,000 ԱՄՆ դոլար 2012թ.):<br>բ) 2011-12թթ. շարունակվելու են իրականացվել հասարակական կյանքի տարբեր ոլորտներին առնչվող խնդիրների շուրջ քաղաքականությունների մշակմանն ուղղված նախաձեռնություններ: Երկու տարվա ընթացքում հայտարարվելու են մրցույթներ, որոնց շրջանակներում հնարավորություն է ստեղծվելու ներկայացնել Հայաստանի համար հրատապ հարցերի շուրջ հետազոտական աշխատանքներ իրականացնելու, մշակված փաստաթղթերը ներկայացնելու, ինչպես նաև դրանց շուրջ բանավեճեր և քննարկումներ կազմակերպելուն ուղղված հայտեր: Մրցույթի արդյունքում դրամաշնորհների են արժանանալու հասարակական կազմակերպություններ, ԲՈՒՀեր, անհատ-փորձագետներ, այլ կազմակերպություններ: Երկու տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, կտրամադրվի մինչև 25 դրամաշնորհ, իսկ մրցույթի բյուջեն կկազմի 100,000 ԱՄՆ դոլար (50,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 50,000 ԱՄՆ դոլար 2012թ.):<br>գ) 2011-12թթ. քաղաքացիական հասարակության ծրագիրը շարունակելու է օժանդակել մարդու իրավունքների պաշտպանության առավել արդյունավետ իրականացմանը՝ տարբեր հասարակական կազմակերպությունների կարողությունները հզորացնելու ճանապարհով: Երկու տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, կտրամադրվի մինչև 10 դրամաշնորհ, իսկ նախաձեռնության բյուջեն կկազմի 220,000 ԱՄՆ դոլար (110,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 110,000 ԱՄՆ դոլար 2012թ.):<br>դ) 2011-12թթ. քաղաքացիական հասարակության ծրագիրը կշարունակի իր գործունեությունն ուղղված հասարակության խոցելի խմբերի շահերի պաշտպանությանը՝ նրանց խնդիրներին առնչվող տարբեր հարցերի շուրջ հանրային լայն քննարկումներ անցկացնելու ձևաչափով, որին մասնակից կդառնան և պետական, և հասարակական, և միջազգային կազմակերպությունների բոլոր հետաքրքրված անձիք: Այս քննարկումները կարևորվում են տարբեր խնդիրների լուծման |

| | |
|---|---|
| | գործընթացներում ընդգրկված տարբեր կառույցների միջև կառուցողական բանավեճի ծավալմանն ու մտքերի փոխանակմանը: Երկու տարվա ժամանակահատվածում, այս նախաձեռնությունների շրջանակներում նախատեսվում է կազմակերպել մինչև 25 քննարկումներ, հանդիպումներ, կլոր-սեղաններ, բանավեճեր, տեղական և միջազգային փորձագետների մասնակցությամբ: Նախաձեռնության բյուջեն կազմում է 30,000 ԱՄՆ դոլար (15,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 15,000 ԱՄՆ դոլար 2012թ.):<br>ե) 2011-2012թթ. քաղաքացիական հասարակության ծրագիրը կիրականացնի պիլոտային նախաձեռնություններ Հայաստանի մարզերում, ուղղված համայնքային բնակչության մասնակցային գործընթացների ակտիվացմանն իրենց համայնքի կյանքում: Երկու տարվա ընթացքում ընդհանուր առմամբ կտրամադրվի 2-3 դրամաշնորհ հասարակական կազմակերպություններին: Նախաձեռնության բյուջեն կազմում է 50,000 ԱՄՆ դոլար (25,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 25,000 ԱՄՆ դոլար 2012թ.):<br><br>«Քաղաքացիական հասարակություն» ծրագրի ընդհանուր բյուջեն երկու տարվա համար կազմելու է 600,000 ԱՄՆ դոլար (300,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 300,000 ԱՄՆ դոլար 2012թ.):<br><br>2011-2012թ.թ. «Հանրային առողջապահություն» ուղղությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագիրը նախատեսում է իրականացնել ծրագրեր, որոնք ուղղված կլինեն հանրային առողջապահության խնդիրների լուծմանը, առողջության և իրավունքի ոլորտների համադրությանը, խոցելի խավերի առողջապահական խնդիրների շուրջ շահերի պաշտպանությանը, այս ոլորտում գործունեություն իրականացնող քաղաքացիական հասարակության ներուժի զարգացմանը: Այս ուղղությունների շրջանակներում իրականացվելու են հետևյալ ենթաուղղությունները իրենց համապատասխան բյուջեներով.<br>ա) «Իրավունք և առողջապահություն» և «Վնասի նվազեցման» ծրագրերի նպատակն է աջակցել խոցելի խավերի առողջապահական իրավունքների պաշտպանությանը և իրականացնել այդ խմբերի շահերի պաշտպանությանն ուղղված ծրագրեր: Ծրագրի շրջանակներում կատարվելու է մարդու առողջությանը վերաբերող օրենքների և օրենսդրական ակտերի վերլուծություն և մշակում, կատարվելու են իրավունքի և առողջապահության խնդիրներն արծարծող ուսուցողական ձեռնարկների մշակման, տպագրման ու տարածման աշխատանքներ, իրականացվելու են իրավունքի և առողջապահության ոլորտի մասնագետների կատարելագործման ծրագրեր: Երկու տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, կտրամադրվի մինչև 8 դրամաշնորհ:<br>«Իրավունք և առողջապահություն» և «Վնասի նվազեցման» ծրագրերի բյուջեն կազմում է 130,000 ԱՄՆ դոլար (65,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 65,000 ԱՄՆ դոլար 2012թ.):<br>բ) «Ցավամոքիչ (պալիատիվ) խնամք» ծրագրի նպատակն է աջակցել այդ ոլորտի քաղաքականության իրականացմանը, անհրաժեշտ մասնագետների պատրաստման նպատակով ուսումնական կենտրոնի ստեղծմանը, քննարկումների կազմակերպմանը:<br>Այս աշխատանքները կիրականացվեն ուղղակիորեն հիմնադրամի, պալիատիվ խնամքի բնագավառում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների և համապատասխան փորձագետների կողմից: Երկու տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, կտրամադրվի մինչև 3 դրամաշնորհ:<br>«Ցավամոքիչ խնամք» ծրագրի բյուջեն կազմում է 80,000 ԱՄՆ դոլար (40,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 40,000 ԱՄՆ դոլար |

2012թ.):
գ) «Հոգեկան առողջություն» ծրագրի նպատակն է աջակցել «Հոգեկան առողջություն» քաղաքականության մշակմանը, համապատասխան օրենսդրական առաջարկների մշակմանն, ու այդ ոլորտի խնդիրների շուրջ լայն հանրային քննարկումների կազմակերպմանը:
Այս աշխատանքները կիրականացվեն ուղղակիորեն հիմնադրամի կողմից՝ համապատասխան տեղական և միջազգային փորձագետների ընդգրկվածությամբ:
«Հոգեկան առողջություն» ծրագրի երկու տարվա բյուջեն կազմում է 10,000 ԱՄՆ դոլար (5,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 5,000 ԱՄՆ դոլար 2012թ.):
դ)«Երեխաների իրավունքների վերահսկում» ծրագրի նպատակն է՝ երեխաների իրավունքների վերահսկում և պաշտպանություն:
Երեխաների իրավունքների վերահսկում» ծրագրի բյուջեն կազմում է 30,000 ԱՄՆ դոլար (15,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 15,000 ԱՄՆ դոլար 2012թ.):

«Հանրային առողջապահություն» ծրագրի ընդհանուր բյուջեն երկու տարվա համար կազմելու է 250,000 ԱՄՆ դոլար (125,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 125,000 ԱՄՆ դոլար 2012թ.):

2011-2012թ.թ. «Միջնակարգ կրթություն» ծրագրի ուղղությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագիրը նախատեսում է աջակցել հետևյալ նախաձեռնություններին.
ա) 2011թ. ապրիլ և 2012թ. մայիս ամիսներին հայտարարվելու է մրցույթ, որի նպատակն է ամրապնդել և ծրագրային նախկին փորձի հիման վրա ընդլայնել դպրոցների համայնքային կենտրոնների գործունեությունը «Եվրոպան դպրոցում» ակումբների միջոցով, որը կնպաստի դպրոցականների և համայնքի շրջանում քաղաքացիական նախաձեռնության և ժողովրդավարության մասին տեղեկացվածության բարձրացմանը, ինչպես նաև դպրոցի, համայնքի և տարբեր կառույցների միջև համագործակցության խորացմանը: Երկու տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, կտրամադրվի մինչև 12-16 դրամաշնորհ, իսկ նախաձեռնության բյուջեն կկազմի 72,000 ԱՄՆ դոլար (36,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 36,000 ԱՄՆ դոլար 2012թ.):
բ) 2011 սեպտեմբեր և 2012թ. հոկտեմբեր ամիսներին հայտարարվելու է մրցույթ՝ ուղղված հատուկ կարիքներով երեխաների՝ հանրակրթական դպրոցներ ներառման ամրապնդմանը, ինչպես նաև լսողության, խոսքի և մտավոր խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատող հատուկ դպրոցների որպես ռեսուրս կենտրոններ դառնալուն օժանդակությանը: Երկու տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, կտրամադրվի մինչև 10 դրամաշնորհ, իսկ նախաձեռնության բյուջեն կկազմի 75,000 ԱՄՆ դոլար (45,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 30,000 ԱՄՆ դոլար 2012թ.):
գ) 2011թ. հուլիս - 2012թ. հուլիս շարունակվելու է միջին և ավագ դպրոցների համար առարկայական չափորոշիչների փորձարկմանն ու բարելավմանն ուղղված նախաձեռնության աջակցությունը: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել "Կրթություն առանց սահմանների" կազմակերպության հետ: Երկու տարվա բյուջեն կազմելու է 60,000 ԱՄՆ դոլար (25,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 35,000 ԱՄՆ դոլար 2012թ.):

«Միջնակարգ կրթություն» ծրագրի ընդհանուր բյուջեն երկու տարվա համար կազմելու է 207,000 ԱՄՆ դոլար (106,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 101,000 ԱՄՆ դոլար 2012թ.):

2011-12թթ. «Բարձրագույն կրթություն» ուղղությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագիրը նախատեսում է հետևյալ միջոցառումները.
ա) 2011թ. և 2012թ. բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտում կիրականացվի բազմակողմանի մոնիտորինգային ծրագիր, որի նպատակն է բացահայտել Բոլոնիայի գործընթացի ներքո իրականացվող բարձրագույն կրթության փոփոխությունների ազդեցությունը բուհական կրթության որակի վրա: Մոնիտորինգի արդյունքների հիման վրա կմշակվեն բարձրագույն կրթության քաղաքականությանն ուղղված առաջարկություններ: Ծրագրի բյուջեն կկազմի 40,000 ԱՄՆ դոլար (20,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 20,000 ԱՄՆ դոլար 2012թ.):
բ) 2011թ. ապրիլ-մայիս ամիսներին կսկսվի և 2012թ կշարունակվի Հիմնադրամի «Տեղեկատվական» ծրագրի հետ համատեղ իրականացվող էլեկտրոնային բովանդակության ներդրման ծրագիրը: Սրա նպատակը կլինի ստեղծել ազատ օգտագործման կրթական ռեսուրսներ համալսարանների համար, որոնց հիմքում կլինեն էլեկտրոնային բովանդակությամբ առարկայական ծրագրեր և իրենց բաղկացուցիչ տարրերը: Բարձրագույն կրթության աջակցության ծրագրի շրջանակներում կհայտարարվի մրցույթ՝ համալսարաններում ուսումնական ծրագրերի վերափոխման համար, որոնք հիմք կծառայեն էլեկտրոնային բովանդակության նախատիպ ստեղծել ԲՈՒՀ-երի համար: Երկու տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, կտրամադրվի մինչև 3 դրամաշնորհ, իսկ նախաձեռնության բյուջեն կկազմի 60,000 ԱՄՆ դոլար (30,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 30,000 ԱՄՆ դոլար 2012թ.):
գ) 2011թ և 2012թ. հետևողականորեն կշարունակվեն իրականացվել կրթության որակի բարձրացմանն ուղղված ծրագրեր, որոնք իրենց մեջ կպարունակեն հետևյալ բաղադրիչները. դասախոսների աջակցման ծրագիր, որի արդյունքում դրամաշնորհներ կտրվեն դասախոսների վերապատրաստման կենտրոններին ԲՈՒՀ-երում և կրթական ծրագրերի մշակման կամ վերամշակմանն արդեն իսկ եղած կամ նոր մասնագիտությունների համար: Ծրագիրը աջակցելու է ուսանողակենտրոն ուսումնական ծրագրեր կազմելու և մատուցելու, դասավանդման նորարարական մեթոդներ և հմտություններ ձեռք բերելու ոլորտներում: Երկու տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, 4-5 ԲՈՒՀ կստանա դրամաշնորհ, իսկ նախաձեռնության բյուջեն կկազմի 100,000 ԱՄՆ դոլար (50,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 50,000 ԱՄՆ դոլար 2012թ.):

«Բարձրագույն կրթություն» ծրագրի ընդհանուր բյուջեն երկու տարվա համար կազմելու է 200,000 ԱՄՆ դոլար (100,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 100,000 ԱՄՆ դոլար 2012թ.):

2011-2012թթ. <u>«Տեղեկատվություն»</u> ուղղությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագիրը շարունակելու է իր գործունեությունը՝ աջակցելով տեղեկատվական տեխնոլոգիաների առավել լայն կիրառմանը կրթության ոլորտում և հասարակական կազմակերպություններում, ինչպես նաև Ինտերնետի հայալեզու կայքերի զարգացմանը:
Նախատեսվում են հետևյալ միջոցառումները.
ա) 2011թ. և 2012թ. Տեղեկատվական ծրագիրը շարունակելու է իր գերակա ուղղությունների մեջ տեսնել համագործակցությունը կրթական ոլորտի հետ: Տեղեկատվական ծրագիրը աջակցություն է ցուցաբերելու ծրագրերի,

| | |
|---|---|
| | որոնք ուղղված են լինելու տեղեկատվական տեխնոլոգիաների առավել ակտիվ կիրառմանը կրթական գործընթացներում: 2011թ. ապրիլ և 2012թ. հունիս ամիսներին հայտարարած մրցույթների միջոցով ընտրվելու են կամակերպություններ, որոնք ստեղծելու են նոր տեղեկատվական պլատֆորմներ, ուղղված բուհական կրթությունը դարձնելու առավել համապատասխան ժամանակակից պահանջներին: Ծրագրի բյուջեն կկազմի երկու տարվա համար 145,000 ԱՄՆ դոլար (75,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 70,000 ԱՄՆ դոլար 2012թ.): Դրամաշնորհի կարժանանան 4-5 ԲՈՒՀեր և կազմակերպություններ:<br>բ) 2011թ. փետրվար-մարտ և 2012թ. հունիս-հուլիս ամիսներին կկազմակերպվեն դասընթացներ հասարական կազմակերպությունների համար արդյունավետ վեբ կայքերից օգտվելու նպատակով: Երկու տարվա ընթացքում, մրցույթի արդյունքում դրամաշնորհի կարժանանան 4-5 մասնագիտացված կազմակերպություն: Ծրագրի բյուջեն կկազմի 50,000 ԱՄՆ դոլար (25,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 25,000 ԱՄՆ դոլար 2012թ.):<br>գ) 2011թ. սեպտեմբեր – 2012թ. հոկտեմբեր ամիսներին կհայտարարվի մրցույթ տարբեր ոլորտներում հայալեզու վեբ կայքերի ստեղծման, տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման և օգտվելու դասընթացներ կազմակերպելու նպատակով: Երկու տարվա ընթացում դրամաշնորհի կարժանանան 3-4 կազմակերպություններ: Ծրագրի բյուջեն կկազմի 60,000 ԱՄՆ դոլար (30,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 30,000 ԱՄՆ դոլար 2012թ.):<br><br>«Տեղեկատվություն» ծրագրի ընդհանուր բյուջեն երկու տարվա համար կազմելու է 255,000 ԱՄՆ դոլար (130,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 125,000 ԱՄՆ դոլար 2012թ.):<br><br>2011-12թթ. <u>«Իրավաբանական և քրեական արդարադատություն»</u> ուղղությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագիրը նախատեսում է աջակցել հետևյալ միջոցառումներին.<br>ա) 2011թ. և 2012թ. ամբողջ ծավալով կշարունակվի աջակցությունը ՀՀ Ոստիկանության կողմից ստեղծված «Հասարակական դիտորդական խմբին»: Խումբը իրականացնում է հասարակական վերահսկում ՀՀ Ոստիկանության համակարգում ձերբակալված անձանց պահելու վայրերում: Խմբի անունից դրամաշնորհ ստացող կազմակերպությունն է «Մարդու իրավունքների պաշտպանության երևանյան կենտրոն» հասարակական կազմակերպությանը: Ծրագրի բյուջեն երկու տարվա համար կազմելու է 40,000 ԱՄՆ դոլար (20,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 20,000 ԱՄՆ դոլար 2012թ.):<br>բ) 2011թ. և 2012թ. աշխատանքների ամբողջ ծավալով շարունակվելու է ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանն ու փակ հաստատությունների պայմանների բարելավման ծրագիրը: Ծրագիրն իրականացվելու է Արդարադատության նախարարության կողմից ստեղծված «Հասարակական դիտորդական խմբի» կողմից: Ծրագրի շրջանակներում Խումբը իրականացնելու է հասարակական վերահսկում քրեակատարողական հիմնարկներում: Խմբի անունից դրամաշնորհ ստացող կազմակերպությունն է «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությանը: Ծրագրի բյուջեն երկու տարվա համար կազմելու է 40,000 ԱՄՆ դոլար (20,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 20,000 ԱՄՆ դոլար 2012թ.):<br>գ) 2011թ. և 2012թ. «Իրավունք և քրեական արդարադատություն» ծրագրի շրջանակներում կաջակցի Հայաստանում օրենքի գերակայության և մարդու իրավունքների խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպություններին իրականացնելու մշտադիտարկումներ հանրային կյանքի տարբեր ոլորտներում իրականացվող բարեփոխումների նկատմամբ: Աջակցություն կստանան նաև ծրագրեր, որոնք ուղղված կլինեն հասարակության տեղեկացվածության բարձրացմանը մեր երկրում ընթացող տարբեր բարեփոխումների մասին: Երկու տարվա ընթացքում դրամաշնորհի կարժանանան 3-4 հասարակական կազմակերպություն: Ծրագրի երկու տարվա բյուջեն կազմելու է 60,000 ԱՄՆ դոլար (30,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 30,000 ԱՄՆ դոլար 2012թ.):<br>դ) 2011թ. և 2012թ. «Իրավունք և քրեական արդարադատություն» ծրագիրը կշարունակի օժանդակել Կրթության և գիտության նախարարության կողմից ստեղծված Հասարակական մշտադիտարկման խմբին: Խումբը իրականացնում է մոնիտորինգային գործունեություն հատուկ կրթական հաստատությունների նկատմամբ: Ծրագրի բյուջեն երկու տարվա համար կկազմի 40,000 ԱՄՆ դոլար (20,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 20,000 ԱՄՆ դոլար 2012թ.): Խմբի անունից դրամաշնորհ ստացող կազմակերպությունն է Հայաստանի մանկական ասոցիացիան:<br>ե) 2011թ. և 2012թ. շարունակվելու է «Իրավունք և քրեական արդարադատություն» ծրագրի շրջանակներում աջակցություն ցուցաբերվել «Ռազմավարական դատավարություն» ծրագրին, որը իրականացվում է ԲՀԻՕՀՀՄ-ի կողմից: Ծրագիրը նպաստում է իրավաբանական և փաստաբանական մասնագիտությունների զարգացմանը Հայաստանում: Ծրագրի ընթացքում նախատեսվում է կազմակերպել վերապատրաստման դասընթացներ փաստաբանների համար՝ ընդգրկելով տեղացի և արտասահմանյան բարձրակարգ մասնագետների: Ծրագրի երկու տարվա բյուջեն կազմելու է 80,000 ԱՄՆ դոլար (40,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 40,000 ԱՄՆ դոլար 2012թ.):<br><br>«Իրավաբանական և քրեական արդարադատություն» ծրագրի ընդհանուր բյուջեն երկու տարվա համար կազմելու է 260,000 ԱՄՆ դոլար (130,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 130,000 ԱՄՆ դոլար 2012թ.): |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը<br>2011-12թթ նախատեսվում է սարքավորումների, ապրանքների, գրքերի, ամսագրերի, CD, DVD-ների ներմուծում և ձեռքբերում, հեռահաղորդակցման կապի ծառայությունների վարձավճարներից ԱԱՀ-ից ազատում, տպագրական ծախսերի ԱԱՀ-ից ազատում, գրասենյակային, ինչպես նաև կոնֆերանսների, սեմինարների կազմակերպման հետ կապված տարածքի վարձակալության և այլ ծառայությունների ԱԱՀ-ից ազատում: CD-ները, DVD-ները, գրքերը, ամսագրերը ծառայելու են ուսումնական, կրթական, մշակութային և գիտական նպատակների համար, տրամադրվելու են դպրոցներին, ԲՈՒՀ-երին, գրադարաններին, մշակութային և ստեղծագործական կազմակերպություններին, հասարակական կազմակերպություններին: Ընդհանուր արժեքը երկու տարվա համար կազմելու է 14,000 ԱՄՆ դոլար՝<br>- երկրի ներսում ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների, այն է՝ տպագրական ծախսերի, հեռահաղորդակցման կապի ծառայությունների վարձավճարների, համակարգիչների ծրագրային ապահովման, կոնֆերանսների, սեմինարների կազմակերպման հետ կապված տարածքի վարձակալման և այլ ծառայությունների ընդհանուր արժեքը կազմում է 5,000 ԱՄՆ դոլար;<br>- արտերկրից ներմուծվող համակարգիչների (թվով 10 հատ), հեռահաղորդակցման և այլ օժանդակ սարքավորումների (թվով 15 միավոր) ներմուծման և ձեռքբերման արժեքը կազմում է 8,000 ԱՄՆ դոլար<br>- արտերկրից ներմուծվող CD, DVD-ների, գրքերի և ամսագրերի ներմուծման և ձեռքբերման արժեքը կազմում է 1,000 ԱՄՆ դոլար: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը |

2011-12թթ. Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից իրականացվող բոլոր ծրագրերի ընդհանուր կազմակերպչական ծախսերը (աշխատավարձ, տարածքի վարձակալում, սարքավորումների ձեռքբերում կամ ներմուծում, 2010-11թթ. ԲՀԻՕՀՀՄ-ի հաշվետվության տպագրում (4,000 ԱՄՆ դոլար, տպագիր և էլեկտրոնային ֆորմատով), գործուղման ծախսեր, թերթերի և ամսագրերի բաժանորդագրություն, էլեկտրաէներգիայի, գազի, ջրի վարձավճարներ, և այլ գրասենյակային ծախսեր) կազմում են 237,070 ԱՄՆ դոլար (119,204 ԱՄՆ դոլար 2011թ. և 117,866 ԱՄՆ դոլար 2012թ.), որը կազմում է ԲՀԻՕՀՀՄ-ի 2011-12թթ. ընդհանուր ծրագրային ծախսերի մոտ 11,8%: Ակնկալվում է միջազգային, տեղական, բջջային հեռախոսակապի ծախսեր մոտ 8,800 ԱՄՆ դոլար, որից 2,800 ԱՄՆ դոլարը միջազգային և տեղական հեռախոսակապի ծախսերն են, իսկ 2,000 ԱՄՆ դոլարը կազմում են բջջային հեռախոսակապի ծախսերը՝ կնքված են պայմանագրեր «Արմենտել» ՀՁ ՓԲԸ-ի հետ: Ինտերնետ կապի ապահովման համար կնքվել է պայմանագիր ԲՀԻՕՀՀՄ-ի և «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ի միջև՝ 4,000 ԱՄՆ դոլար գումարի: Ակնկալվում է համակարգչային սարքավորումների՝ սերվեր, համակարգիչներ, մոնիտորներ, անխափան սնուցման սարքեր, տպիչ, պատճենահանման մեքենա, այլ ցանցային սարքավորումներ և ծրագրային ապահովման ձեռքբերում ԲՀԻՕՀՀՄ-ի գրասենյակի համար՝ 16,000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժողության: Մատակարար կազմակերպությունը և երկիրը, որտեղից կներմուծվեն կամ կձեռքբերվեն սարքավորումները պարզ կդառնա հայտարարված մրցույթի արդյունքում:

Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ

ԲՀԻՕՀՀՄ-ի ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է համագործակցություն՝

ՀՀ Ազգային ժողովի հետ՝ մի շարք օրենքների մշակման և ընդունման հարցերում, մասնավորապես Կրթության, գիտության, մշակույթի և երիտասարդության հարցերի, Պետաիրավական հարցերի և նաև Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովների հետ:

ՀՀ Արտաքին գործերի նախարարության հետ՝ Եվրոպական հարևանության քաղաքականության և Արևելյան գործընկերության ծրագրերի շրջանակներում մասնակցային գործընթացի ապահովման ուղղությամբ:

ՀՀ Առողջապահության նախարարության հետ, կնքված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում, նախատեսվում է միջոցառումներ պալիատիվ խնամքի և հոգեկան առողջության քաղաքականության մշակման նպատակով, վնասի նվազեցման ծրագրի շրջանակներում նախատեսվում է համագործակցություն թմրամիջոցներ օգտագործողների այլընտրանքային բուժման նպատակով, հակածխախոտային ծրագրի շրջանակներում նախատեսվում են հետազոտական աշխատանքներ և գործող օրենքի իրականացմանը նպաստող միջոցառումներ, հետբուհական կրթական առողջապահական ծրագրերի շրջանակներում նախատեսվում է առողջապահական ոլորտի մասնագետների հետբուհական կրթություն և վերապատրաստում, ինչպես նաև ապագա բժիշկների և պրակտիկ բժիշկների համար իրավունքի և առողջապահության խնդիրների վերաբերյալ դասընթացների կազմակերպման ու անցկացման գործում, նաև պացիենտների և բժիշկների իրավունքների պաշտպանության և խնդիրների իրազեկման հարցերի շուրջ:

Աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության հետ նախատեսվում է համագործակցություն հոգեկան առողջության ծրագրի շրջանակներում՝ հաշմանդամների ցուցակների տրամադրման և հաշմանդամների սոցիալական և ընտանեկան պայմանների բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքների բնագավառում: Այս նախարարության հետ հաստատվել է սերտ համագործակցություն նաև կանանց դեմ բռնության վերաբերյալ օրենքի մշակման և հետագա կյանքի կոչելու գործընթացում:

ՀՀ Արդարադատության նախարարության հետ՝ դատաիրավական ոլորտի բարեփոխումների, ինչպես նաև ԱՆ-ն կողմից ստեղծված քրեակատարողական հիմնարկների նկատմամբ հասարակական վերահսկման խմբի գործունեության աջակցության շրջանակներում:

ՀՀ Կրթության և գիտության նախարարարության և Կրթության ազգային ինստիտուտի հետ կնքված է փոխըմբռնման հուշագիր՝ օժանդակելու Հայաստանի Հանրապետությունում ԲՀԻՕՀՀՄ–ի կողմից իրականացվող «Բարձրագույն կրթության աջակցության» և միջնակարգ կրթության ծրագրերին, որոնք ծառայում են Հայաստանի կրթական համակարգի արդյունավետ զարգացմանը, օգնում են Հայաստանի կրթության կարիքների գնահատմանը և առկա խնդիրների նկատմամբ նոր մոտեցումների մշակմանը: ԲՀԻՕՀՀՄ-ն «Բարձրագույն կրթության աջակցության» ծրագրի շրջանակներում մրցութային սկզբունքով համագործակցում է ԲՈՒՀ-երի և կրթության ոլորտում աշխատող հասարակական կազմակերպությունների հետ: Վերջիններիս շնորհված դրամաշնորհների շրջանակներում իրականացվում են ծրագրեր, որոնք ուղղված են Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտում ՀՀ Կրթության և գիտության նախարարարության կողմից բարեփոխումների իրականացմանն ու աջակցելուն:

Կրթության և գիտության նախարարարության և Կրթության ազգային ինստիտուտի, ինչպես նաև դոնոր կազմակերպությունների հետ համատեղ իրականացվում է միջնակարգ դպրոցի համար առարկայական չափորոշիչների, նոր ուսումնական ծրագրերի, օժանդակ նյութերի և էլեկտրոնային դասագրքերի ստեղծում, դրանց փորձարկում ու տարածում Հայաստանի միջնակարգ դպրոցներում և դրանց կիրառման նպատակով՝ ուսուցիչների վերապատրաստում:

Կրթության և գիտության, ինչպես նաև Աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունների հետ ձեռք բերված համաձայնության հիման վրա, ԲՀԻՕՀՀՄ-ն օժանդակում է հատուկ կրթության և կիսափակ հաստատություններում հասարակական վերահսկում իրականացնող խմբի աշխատանքներին:

ԲՀԻՕՀՀՄ-ն համագործակցելու է ՀՀ Գիտությունների Ազգային ակադեմիայի հետ՝ իրականացնելով ծրագրեր ուղղված տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմանը կրթության և գիտության ոլորտում:

ՀՀ Ոստիկանության հետ՝ վնասի նվազեցման ծրագրի շրջանակներում նախատեսվում են մի շարք միջոցառումներ՝ ոստիկանների այցելություններ արտերկրներ՝ փորձի փոխանակման նպատակով, սեմինարների մասնակցություն ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման նպատակով՝ խոցելի խմբերի շրջանում, ինչպես նաև Հասարակական դիտորդական խմբի գործունեության աջակցման ծրագրում:

World Vision-ի և Global Fund-ի հետ՝ ԲՀԻՕՀՀՄ-ն հանդիսանում է ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված միջոցառումների համակարգող հանձնաժողովի անդամ:

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրերի հետ՝ ԲՀԻՕՀՀՄ-ն հանդիսանում է ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված միջոցառումների աշխատանքային խմբի անդամ: ՄԱԿ-ի Զարգացման ծրագրերի հետ համատեղ արդեն մի քանի տարի է օժանդակություն է ցուցաբերվում Հայաստանում նոր տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ոլորտին՝ հնարավորություն ընձեռնելով Հայաստանի դպրոցներին, ԲՈՒՀ-երին, գրադարաններին, գիտակրթական այլ հաստատություններին ունենալու մատչելի և բարձր որակի Ինտերնետային հաղորդակցման կապ:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության հետ ԲՀԻՕՀՀՄ-ն հանդիսանում է գործընկեր առաջիկա 5տարիներում նպաստել մարդու իրավունքների և ժողովրդավարության զարգացմանը Հայաստանում:

ԵԱՀԿ երևանյան գրասենյակի և ԺՄԻԳ-ի գրասենյակի հետ համատեղ իրականացվում են մի շարք ծրագրեր, որոնք

| | |
|---|---|
| | ուղղված են Հայաստանում մարդու իրավունքների և շահերի պաշտպանությանն և այդ ոլորտում միջազգային նորմերի ներդրմանն ու կիրառմանը:<br>Եվրոպական հանձնաժողովի հետ համատեղ, ԲՀԻՕՀՀԱ-ն աջակցում է Հայաստանում երեխաների իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմների ստեղծմանն ու ներդրմանը:<br>Նորվեգական Կառավարության հետ՝ իրավաբանական և փաստաբանական գործունեության արդյունավետության բարձրացման շրջանակներում:<br>Նիդեռլանդների Կառավարության հետ՝ մարդու իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների կարողությունների զարգացման ուղղությամբ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը<br>- ԲՀԻՕՀՀԱ-ի ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը իրականացվում է հետևյալ մարմինների կողմից՝ ա) յուրաքանչյուր տրամադրված դրամաշնորհի ֆինանսական միջոցների և ծրագրի իրականացման վերահսկումը դրամաշնորհների ղեկավարի և ծրագրի պատասխանատուի, բ) ԲՀԻՕՀՀԱ-ի գործադիր տնօրենի, գ) Տնօրենների խորհրդի, դ) ցանցային գլխամասային (Նյու Յորք, Բուդապեշտ, Լոնդոն) գրասենյակների: Վերահսկման եղանակներն են.<br>- Բաց հասարակության ինստիտուտի գլխամասային ցանցային գրասենյակին (Նյու Յորք) և Բաց հասարակության ինստիտուտի կենտրոնացված ֆինանսա-վարչական միավորին (Բուդապեշտ) ամսեկան ֆինանսական հաշվետվությունների, ինչպես նաև տարեկան հաշվետվությունների տրամադրում;<br>- Բաց հասարակության ինստիտուտի ցանցային աուդիտորական բաժանմունքի և տարածաշրջանային ֆինանսական տնօրենի կողմից իրականացվում է ամենամյա ներքին աուդիտ;<br>- Բաց հասարակության ինստիտուտի ցանցային աուդիտորական բաժանմունքի պատվերով իրականացվում է ԲՀԻՕՀՀԱ-ի տարեկան ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտ (2000թ.-ից այն իրականացվում է KPMG-ի կողմից);<br>- ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ներկայացնել եռամսյակային և տարեկան հաշվետվություններ՝ համաձայն ընդունված կարգի;<br>- Եռամսյա տեղեկատվական պարբերականի հրատարակում և տարածում<br>- Ամենամյա տարեկան հաշվետվության տպագրում և տարածում: |